ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 109-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԴԻՁԱՅՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1803-Լ որոշմամբ հաստատված ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության և դրանից բխող 2024-2026 թվականների ծրագրում ներառված 1-ին ուղղության 5-րդ կետի՝ «Ոստիկանության արտաքին նկարագրի բարելավում, միասնականացում» գործողության կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության և պարեկային

ծառայության ծառայողների հանդերձանքի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև դրանք կրելու ժամկետները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների հանդերձանքի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև դրանք գրելու ժամկետները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության գվարդիայի ծառայողների հանդերձանքի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև դրանք կրելու ժամկետները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
29.12.20252թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29» դեկտեմբերի 2025թ.
N 109-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԴԻՉԱՅՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Կեպի սպորտային՝ ամառային



Կեպին ունի մուգ կապույտ (անգլերեն՝ «Midnight Navy» կամ սև երանգին մոտ) գույն, կազմված սանդոս կամ նմանատիպ կտորից: Կտորի բաղադրությունը՝ առնվազն 55% բամբակ, առավելագույնը 45% պոլիէսթեր, քաշը 1մ^2 240գրամ, ±3%: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Գլխարկահովհարի հաստությունը՝ 3մմ, իսկ երկարությունը կենտրոնական մասում 7 սմ, որի եզրագիծը սպիտակ կտորով մշակված: Թասակը բաղկացած է հինգ կտորից, որոնք վերևի կենտրոնական մասում ունեն ասեղնագործված օդանցքներ: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովհարին 3 սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7 մմ հեռավորությամբ: Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ հետևում 1X8 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Կեպին պետք է ունենա կլոր թասակ: Հետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5 սմ-ից ոչ պակաս:

2. Կեպի սպորտային՝ գարնանային, աշնանային



Կեպին ունի մուգ կապույտ (անգլերեն՝ «Midnight Navy» կամ սև երանգին մոտ) գույն: Կտորի բաղադրությունը՝ առավելագույնը 70% պոլիէսթեր, առնվազն 30% բուրդ, քաշը 1 մ^2 350 գ, ±3%: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Գլխարկահովհարի հաստությունը՝ 3մմ, իսկ երկարությունը կենտրոնական մասում 7 սմ, որի եզրագիծը սպիտակ կտորով մշակված: Թասակը բաղկացած է հինգ կտորից: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովհարին 3 սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7 մմ հեռավորությամբ: Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ հետևում 1X8 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Կեպին պետք է ունենա կլոր թասակ: Հետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5 սմ-ից ոչ պակաս:

3. Կեպի սպորտային՝ ձմեռային

Կեպին ունի կապտասև (անգլերեն՝ «Dark Navy Blue») գույն: Կտորի բաղադրությունը՝ անջրանցիկ 100% պոլիէսթեր կամ նույնատիպ կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ^2, ±3%, ջերմություն պահող: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Թասակը բաղկացած է հինգ կտորից: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովհարին 3 սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7 մմ հեռավորությամբ: Կեպին ներսի կողմից ունի տաք ներդիր, վզամասը և ականջները փակելու համար: Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13 սմ «POLICE», իսկ հետևում 1X8 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

բառերը: Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ: Հետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5 սմ-ից ոչ պակաս:

4. Կիսավերարկու

Կիսավերարկուն ունի կապտասև (անգլերեն՝ «Dark Navy Blue») գույն: Կտորի բաղադրությունը՝ անջրանցիկ 100% պոլիէսթեր կամ նույնատիպ կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ^2, ±3%:Կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում ներկարված է կախիչ: Առաջամասը բաղկացած է 4 մասից, 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 38 մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար և կրծքանշանի ներդիր, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է 35 մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և պլաստմասե շղթայով փակվող, ինչպես նաև աջ և ձախ կողմերի կենտրոնական մասում ուղղահայաց գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և պլաստմասե շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Գոտին կարված է կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը կապտասև գույնի ֆլիս կտորից, ամբողջությամբ առանձնանում է պլաստմասե շղթայով, որի վրա կարված է վիսկոզից աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են պլաստմասե շղթայով:

Պլաստմասե շղթաները պետք է ունենան Յոդիշա արդյունաբերական բաժնետիրական ընկերության կողմից արտադրվող բարձր արտադրական ստանդարտներին համապատասխանող որակ:

Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում 13X2,5 սմ կարվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Ուսադիրները կարվում են նույն կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճգամով, իսկ ուսերի մասում կարված են:

5. Սվիտեր

Սվիտերն ունի կապտասև գույն (անգլերեն՝ «Midnight Navy» կամ սև երանգին մոտ): Կտորի բաղադրությունը՝ սև երանգին մոտ գույնի կտորից, առավելագույնը 72% ակրիլ, առնվազն 28% բուրդ, քաշը 1 մ² 420 գ, ±3%: Կլոր վզով՝ կրկնակի մանժետով, ուսադիրներով, տաբատի մեջ կամ վրան դրվող: Գործվածքի տեսակը Հալֆ Միլանո, 2X2 մանժետների մասում, 5-6 սմ երկարությամբ: Թևքերի թեզանիքը և գոտկատեղի գործվածքը էլաստիկ ժապավենային, 5-6 սմ երկարությամբ: Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ուսագլուխների և արմունկների հատվածում ամրակցված է կապույտ գույնի կրկնակի վրադիր կտոր, շախմատաձև կարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Ուսադիրները մուգ կապույտ կտորից, սվիտերի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ, որոնց ազատ ծայրերը կոճկվում են մետաղական կոճգամով:

6. Տաբատ՝ կիսաբրդյա

Տաբատն ունի կապտասև գույն (անգլերեն՝ «Midnight Navy»): Կտորի բաղադրությունը՝ մոխրագույն կտորից, առնվազն 67% բուրդ և առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1 մ² 250գ, ±3%: Տաբատը ունի աստառ կապտասև գույնի, ինչպես նաև ինքնակարգավորվող գոտկատեղ: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է մեկ կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Թեք գրպանների ներքևի մասում կարվում են մեծ վրադիր գրպաններ, հետևամասի աջ ու ձախ կողմում կապույրով փակվող ներկարված գրպաններ:

7. Վերնաշապ՝ երկարաթև

Վերնաշապին ունի կապտասև գույն (անգլերեն՝ «Midnight Navy») մոխրագույն կտորից: Կտորի բաղադրությունը՝ առնվազն 67% բամբակ և առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1 մ² 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող (կամ վրան դրվող՝ առաձգական ժապավենով): Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 3 սմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ռադիոկայանի խոսափողի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր, կրկնակի կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասը ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքը ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև դաստակ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկը ունի օդանցքներ՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները նույն կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ գույնի պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են:

8. Վերնաշապիկ՝ կարճաթև



Վերնաշապիկն ունի կապտասև գույն (անգլերեն՝ «Midnight Navy») մոխրագույն գույնի կտորից: Կտորի բաղադրությունը՝ առնվազն 67% բամբակ և առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1մ² 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող (կամ վրան դրվող՝ առաձգական ժապավենով): Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 3 սմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ալեհավաքի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր, կրկնակի կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասը ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքը ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև արմունկ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան՝

ջակարդով ասեղնագործած: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկը ունի օդանցքներ՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները կարվում են նույն կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են:

9. Պոլո շապիկ՝ կարճաթև

Պոլո շապիկն ունի մուգ կապույտ գույն (անգլերեն՝ «Midnight Navy» կամ սև երանգին մոտ) մոխրագույն գույնի կտորից: Կտորի բաղադրությունը՝ առնվազն 40% պոլիէսթեր, առավելագույնը 60% բամբակյա կտորից, քաշը 1մ² 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող (կամ վրան դրվող՝ առաձգական ժապավենով): Առջևից 3 կոճակով կոճկվող բացվածք: Թևքերի երկարությունը մինչև արմունկները, եզրամասերը ներս ծալված: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով գակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Ուսադիրները մուգ կապույտ նույն կտորից, շապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են:

10. Ներքնաշապիկ՝ կիսաթև

Ներքնաշապիկն ունի սպիտակ և սև գույն: Կտորի բաղադրությունը՝ 100% բամբակ, քաշը 1 մ² 148 գ, ±3%: Այն կարճաթև է, ուղիղ ձևվածքով, կլոր 20 մմ բամբակյա էլաստիկ ժապավենի օձիքով:

11. Կիսաճտքավոր կոշիկ՝ ձմեռային

Կիսաճտքավոր կոշիկն ունի սև գույն, կազմված է բնական կաշվից, 1,3-1,5 մմ հաստությամբ: Բաղկացած է երեսամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից:

Երեսամասը պատրաստված է հարթ և նախշով /նակատով/ կաշիների համադրությամբ: Հետնամասը բաղկացած է 2 դետալներից՝ կաշվից և արհեստական թավշյա կտորից: Հետնամասում, ճիտքի վերևում տեղադրված է 3 սմ լայնությամբ ռեպս, որի շնորհիվ կոշիկի հագնելը կստացվի հեշտ և արագ:

Արտաքին ներբանը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ վերնամասը պոլիուրետանից, իսկ հատակի հետ շփվող ռելիեֆային մասը մաշվածության նկատմամբ կայուն ռետինից: Արտաքին ներբանի ռելիեֆային մասն ունի խորը ինքնամաքրվող նախշեր: Վերնամասը արտաքին ներբանին միացված է ձուլման եղանակով: Արտաքին ներբանի նյութը մղվում է կաղապարի մեջ և կատարվում է կաղապարային ձուլում, որի շնորհիվ իրականացվում է կոշիկի վերնամասի նախապատրաստվածքի հետ ձուլում ՀUS 144-96 (5.2) ստանդարտին համապատասխան: Արտաքին ներբանի ռելիեֆային կենտրոնական մասում նշվում է կոշիկի չափը:

Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2,0-2,2 մմ հաստությամբ կոշիկի համար նախատեսված ամբողջական ստվարաթղթից, որը շարունակվում է մինչև թաթը և որի մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Քթամասը և կրնկամասը կոշտ են և ունեն լրացուցիչ կոշտություն ապահովող և հետ վերականգնվող թերմոպլաստե նյութից ներդիրներ՝ հարվածներից և դեֆորմացիայից պաշտպանությունն ապահովելու համար, որոնք լրացուցիչ երեսպատված են միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով կամ համանման նյութով, ինչը կապահովի լրացուցիչ պաշտպանություն մեխանիկական վնասվածքներից և քերծվածքներից, ընդ որում քթամասում առնվազն 0,8-1,2 մմ հաստությամբ, կրնկամասում՝ 1,5-1,6 մմ:

Կաշվե դետալները հակառակ կողմից մշակվում են տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Հետնամասի և լեզվակի եզրով, երեսամասի և միջնատակի միջև տեղադրված է առաձգական ծակոտկեն սինթետիկ կտոր, որը ձգվում է ճիտքի ամբողջ երկայնքով՝ կոճերից վերև: Կիսաճտքավոր կոշիկի վերնամասի ամբողջ եզրը կարվում է դեպի ներս ծալվածքով:

Միջնատակը լամինացված է մեկ ընդհանուր մեմբրանով /թաղանթով/, որը ջրակայուն է և շնչող: Ջրաանթափանցելիության լիարժեք ապահովման համար միջնատակի բոլոր

կարերը հերմետիկացված են հատուկ ժապավենով:

Կողամասերը քթամասի հետ կարվում են երեքական կարով, կողամասերի և հետնամասի կարերը՝ երկուական:

Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 5 զույգ մետաղական կոճանցքեր և մեկ զույգ կեռիկներ:

Հանովի-դնովի ներդիրը անատոմիապես պրոֆիլավորված է և երկշերտ, մինչև 2,5 մմ հաստությամբ:

Կիսաճտքավոր կոշիկի աջ և ձախ կիսազույգի զանգվածի տարբերությունը չպետք է գերազանցի 15 գրամ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերից պատրաստված սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Երկարությունը՝ 120-125 սմ:

12. Ամենօրյա կոշիկ

Ամենօրյա կոշիկն ունի սև գույն, կազմված բնական կաշվից, 1,2-1,4 մմ հաստությամբ: Բաղկացած է երեսամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից:

Երեսամասը պատրաստված է հարթ և նախշով /նակատով/ կաշիների համադրությամբ: Հետնամասը բաղկացած է 2 դետալներից՝ կաշվից և արհեստական թավշյա կտորից:

Արտաքին ներբանը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ վերնամասը պոլիուրետանից, իսկ հատակի հետ շփվող ռելիեֆային մասը մաշվածության նկատմամբ կայուն ռետինից: Արտաքին ներբանի ռելեքային մասն ունի խորը ինքնամաքրվող նախշեր: Վերնամասը արտաքին ներբանին միացված է ձուլման եղանակով: Արտաքին ներբանի նյութը մղվում է կաղապարի մեջ և կատարվում է կաղապարային ձուլում, որի շնորհիվ իրականացվում է կոշիկի վերնամասի նախապատրաստվածքի հետ ամրակցում:

Արտաքին ներբանի ռելեֆային կենտրոնական մասում նշվում է կոշիկի չափը:

Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2,0-2,2 մմ հաստությամբ կոշիկի համար նախատեսված ամբողջական ստվարաթղթի և բնական կաշվի (պադոշի) համադրությունից, որը շարունակվում է մինչև թաթը և որի մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Քթամասը և կրնկամասը կոշտ են և ունեն լրացուցիչ կոշտություն ապահովող և հետ վերականգնվող թերմոպլաստե նյութից ներդիրներ՝ հարվածներից և դեֆորմացիայից պաշտպանությունն ապահովելու համար, որոնք լրացուցիչ երեսպատված են միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով կամ համանման նյութով, ինչը կապահովի լրացուցիչ պաշտպանություն մեխանիկական վնասվածքներից և քերծվածքներից, ընդորում քթամասում առնվազն 0,8-1,2 մմ հաստությամբ, կրնկամասում՝ 1,5-1,6 մմ:

Կաշվե դետալները հակառակ կողմից մշակվում են տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Հետնամասի և լեզվակի եզրով, երեսամասի և միջնատակի միջև տեղադրված է առաձգական ծակոտկեն սինթետիկ կտոր, որը ձգվում է ճիտքի ամբողջ երկայնքով՝ մինչև կոճեր: Կոշիկի վերնամասի ամբողջ եզրը կարվում է դեպի ներս ծալվածքով:

Կողամասի, քթամասի և հետնամասի կարերը կարվում են երկուական կարով:

Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 4 զույգ մետաղական կաճանցքեր և մեկ զույգ կեռիկներ:

Հանովի-դնովի ներդիրը անատոմիապես պրոֆիլավորված է և երկշերտ, մինչև 2,5 մմ հաստությամբ:

Կոշիկի աջ և ձախ կիսազույգի զանգվածի տարբերությունը չպետք է գերազանցի 15 գրամ:

Կապումն իրականացվում է սև գույնի քուղերից պատրաստված սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Երկարությունը՝ 115-120 սմ:

13. Թիկնոց (թիկնոց-ուսնոց) պարեկային ծառայողի համար

Թիկնոցն (թիկնոց-ուսնոց) ունի մուգ, կազմված անջրանցիկ կտորից, քաշը առնվազն 1 մ^2 160 գ, ±3%, ուղիղ ուրվագծով, օձիքը՝ ծալովի, կենտրոնական 5 կոճակով կոճկվող գաղտնի հանգույցով: Լանջափեշերի վրա՝ թեք ներկարված միջանցիկ բացվածքներ, հանվող գլխանոցով: Մեջքամասը՝ դեպի դուրս բացվող վերին կարով: Թիկունքին «POLICE» մակագրությամբ կտոր:

14. Արտացոլող բաճկոնակ (ժիլետ)



Արտացոլող դեղին բաճկոնակը (ժիլետ) նախատեսված է պարեկային ծառայության ծառայողների համար:

Կտորի բաղադրությունը՝ երեսացուն 100% պոլիէսթեր կամ նույնատիպ, արտացոլող դեղին գույնի կտորից: Քաշը 1 մ^2 160 գ, ±3%: Այն բաղկացած է անթև շապիկի տեսքով առաջամասից և հետևամասից: Առաջամասը և հետևամասը կողքերից ամբողջ երկայնքով սիմետրիկ կտրված: Առաջամասը հետևամասին միանում է հորիզոնական ամբողջական ներքևում կարված կպչուն և արտացոլող 5 սմ լայնության ժապավենով: Ժապավենը չբացված վիճակում 20 սմ վրադիր է, որը հնարավորություն է տալիս ընդարձակվելու: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:

Արտացոլող բաճկոնակի միջնամասում երկու շրջագծով՝ առաջամասին և հետևամասին վրադիր կարվում է 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային

ժապավեններ: Նույն կերպ Արտացոլող բաճկոնակի ուսամասից դեպի թիկունք կարվում են 1 շրջագծով՝ 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ:

15. Արտացոլող բաճկոնակ (երկարաթև)

Արտացոլող դեղին բաճկոնակը (երկարաթև) նախատեսված է պարեկային ծառայության ծառայողների համար:

Կտորի բաղադրությունը՝ երեսացուն 100% պոլիէսթեր կամ նույնատիպ, անջրանցիկ, արտացոլող դեղին գույնի կտորից: Քաշը 1 մ^2 170 գ, ±3%: Այն բաղկացած է 2 առաջամասի լանջափեշերից և մեկ հետևամասից: Արտացոլող բաճկոնը եզրապատված է սև գույնի ժապավենով: Առաջամասը մշակվում է կափույրով ծածկվող սև գույնի պլաստմասե շղթայով: Առաջամասի կափույրի վրա 20 սմ հեռավորությամբ կարվում են 4 հատ կպչուն ժապավեններ 2.5X4.0 սմ չափսի: Կողային մասերը ունեն մեծ բացվածքներ:

Արտացոլող բաճկոնի աջ կողմի կրծքամասում կարվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառը սև գույնի ջակարդով ասեղնագործած կտորից՝ սպիտակ երիզով: Առջևի վերևի կենտրոնական մասում կարվում է 3,5 սմ օղակ՝ տեսախցիկի համար: Ձախ կողմի կրծքամասին կարվում է տարբերանշանի ներդիր: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5 սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Արտացոլող բաճկոնի միջնամասում 2 շրջագծով՝ առաջամասին և հետևամասին վրադիր կարվում է 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Նույն կերպ բաճկոնի թևերին 7 սմ հեռավորության վրա կարվում են 2 շրջագծով՝ 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Թևքերի բերանները մշակվում են առաձգական ժապավենով: Կանգուն օձիքի հետևամասում տեղադրված է պլաստմասե շղթայով փակվող անձրևանոց / կապիշոն/: Անձրևանոցը երեսացուի կտորից: Դիմացի մասի եզրակարի միջով անցնում է սև պարան՝ պլաստմասե փականներով:

16. Աստղ՝ 20մմ

Աստղն արծաթագույն է, պատրաստված է ալյումինի համաձուլվածքից, տրամագիծը 20 մմ, բաղկացած է հարթանիստ բուրգաձև հինգ թևերից:

Աստղը փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

17. Աստղ՝ 13մմ

Աստղն արծաթագույն է, պատրաստված է ալյումինի համաձուլվածքից, տրամագիծը 13 մմ, բաղկացած է հարթանիստ բուրգաձև հինգ թևերից:

Աստղը փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

18. Նշանաքուղ՝ 10x40

Նշանաքուղը 10X40՝ արծաթագույն է, մետաղական, փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

19. Նշանաքուղ՝ 20x40

Նշանաքուղ 20X40՝ արծաթագույն է, մետաղական, փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

20. Ուսադիր (վրադիր շարքային, սպա, ավագ սպա) 40%-35%-25%

Ուսադիրը կազմված է սև գույնի թավշյա արհեստական կտորից՝ օղակաձև 80 մմ երկարությամբ և 55 մմ լայնությամբ: Մակերեսը սև գույնի գործվածքով, ուսադիրների վերնամասը և ներքնամասը սև եզրագծերով, իսկ պարեկային ծառայության ծառայողների ուսադիրների վերնամասը և ներքնամասը կարմիր եզրագծերով: Ոստիկանության գնդապետ, փոխգնդապետ և մայոր կոչումներ ունեցող ծառայողներինը՝ 2 մակաշերտով, իսկ կապիտան, ավագ լեյտենանտ և լեյտենանտ՝ 1 մակաշերտով ուսադիրներ: Կրտսեր կոչում ունեցող ծառայողներին առանց մակաշերտի:

21. Ձեռնոց

Ձեռնոց սև կաշվից, հինգմատնյա:

22. Գոտի տաբատի

Գոտին տաբատի կազմված է սինթետիկ գործվածքից, 35 մմ լայնությամբ, մետաղական ճարմանդով:

23. Գրպանիկներ գոտու համար

Գրպանիկներ գոտու համարը նախատեսված է պարեկային ծառայության ծառայողների համար: Կազմված է սև սինթետիկ նյութից, ամրացվում են գոտու վրա: Նախատեսված են հատուկ միջոցներ և պարագաներ կրելու համար:

24. Պարեկային ծառայության մոտոկարգախմբերի ծառայողների հանդերձանք

Սաղավարտ (IXS 30001.0) կամ նույնատիպ: Պատրաստված է հատուկ պաշտպանիչ և հակահարվածային նյութից: Վեր բացվող դիմային մասով, արևապաշտպան վիզորով:
Բաճկոն (Super net) կամ նույնատիպ: Հատուկ ցանցավոր, հովացնող էֆեկտով: Նյութերը՝ պոլիէսթեր, կորդուռա, արմունկները և ուսերը ներկառուցված պաշտպանիչ ներդիրներով:
Կոշիկներ (Gaerne G rocket), կամ նույնատիպ: Կաշվից, համապատասխան խոցելի վայրերում ամրացված են պաշտպանիչ ներդիրներ (կրունգ, թաթ), տակացուն հատուկ կոշտացված պլատֆորմից է:
Տաբատ (Wake air pants) կամ նույնատիպ:
Նյութերը պոլիէսթեր, կորդուռա, ծնկներին պաշտպանիչ ներդիրներ, հատուկ ցանցավոր հովացնող էֆեկտով:
Ձեռնոցներ (Sport Talura 3) կամ նույնատիպ: Կաշվե ամառային ձեռնոց՝ լավ ապահովությամբ և պերֆորացված:

Կաշվից պերֆորացված հատուկ պաշտպանիչ ներդիրներով, ափի հատվածը այծի կաշի, որը համարվում է փափուկ և շատ ամուր կաշի, թաչով:
Անձրևանոց (Rainsuit Horton3) կամ նույնատիպ: Անջրաթափանց շնչող անձրևանոց, պոլիէսթեր նյութից պատրաստված:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության և պարեկային ծառայության ծառայողների հանդերձանքի կրման ժամկետները

N	Անվանումը	Քանակը	Կրելու ժամկետները
1.	Կեպի սպորտային՝ ամառային	2 հատ	1 տարի
2.	Կեպի սպորտային՝ գարնանային, աշնանային	2 հատ	2 տարի
3.	Կեպի սպորտային՝ ձմեռային	1 հատ	1 տարի
4.	Կիսավերարկու	1 հատ	2 տարի
5.	Սվիտեր	1 հատ	2 տարի
6.	Տաբատ՝ կիսաբրդյա	3 հատ	1 տարի
7.	Վերնաշապ՝ երկարաթև	3 հատ	1 տարի
8.	Վերնաշապիկ՝ կարճաթև	3 հատ	1 տարի
9.	Պոլո շապիկ՝ կարճաթև	3 հատ	1 տարի
10.	Ներքնաշապիկ՝ կիսաթև	4 հատ	1 տարի
11.	Կիսաճտքավոր կոշիկ՝ ձմեռային	1 զույգ	1 տարի
12.	Ամենօրյա կոշիկ	1 զույգ	1 տարի
13.	Թիկնոց (թիկնոց-ուսնոց)	1 հատ	5 տարի
14.	Արտացոլող բաճկոնակ (ժիլետ)	1 հատ	1 տարի
15.	Արտացոլող բաճկոնակ (երկարաթև)	1 հատ	2 տարի
16.	Ձեռնոց	1 հատ	3 տարի
17.	Գոտի տաբատի	1 հատ	2 տարի
18.	Գրպանիկներ գոտու համար	1 հատ	3 տարի
19.	Պարեկային ծառայության մոտոկարգախմբերի ծառայողների հանդերձանք	1 հատ	1 տարի

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29» դեկտեմբերի 2025թ.
N 109-Լ հրամանի

ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԴԻՋԱՅՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Գլխարկ՝ կիսաբրդյա, ամենօրյա

Գլխարկը կիսաբրդյա՝ մուգ փիրուզագույն է: Բաղադրությունը՝ առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ² 314 գ, պոլիէթիլենային թաղանթով: Կազմված է սև, պլաստմասե գլխարկահովհարից և գլխարկաբոլորքից: Գլխարկաբոլորքը սև արհեստական կաշվից, վերևի մասում 38 մմ լայնքով ցանցավոր ժապավեն, սև պլաստմասե ներդիրով, վերևից երիզված կարմիր գծով: Գլխարկաբոլորքի վրա 2 արծաթագույն կոճակներով ամրացվում է երկշերտ զարդապարան (գոտի) 4 օղակներով: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է մեծ մետաղական գլխարկանշան, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության զինանշանի տեսքով: Գլխարկի միջնամասում տեղադրված է սպունգ, մուգ փիրուզագույն աստառ «POLICE» գրառումով և զինանշանի պատկերով: Աստառի մեջտեղի մասում ամրակցված է արհեստական կաշվե կտոր տվյալների գրառումով:

2. Գլխարկ ձմեռային, ականջակալներով

Գլխարկը ձմեռային, ականջակալներով մուգ փիրուզագույն է: Բաղադրությունը՝ առնվազն 51% բամբակ, 49% պոլիէսթեր, քաշը՝ 1մ² 220գ: Բաղկացած է թասակից, ականջակալներից, ծոծրակամասից: Մշակված է արհեստական մորթուց: Ականջակալների վրա կարվում են 12 սմ երկարությամբ սև կապիչներ: Աստառը՝ բամբակյա կտորից: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է փոքր մետաղական գլխարկանշան՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության զինանշանի տեսքով:

3. Կիսավերարկու

Կիսավերարկու կազմված է մուգ փիրուզագույն անջրանցիկ կտորից 100% նեյլոն կամ նույնատիպ, ջրայուղաանդրադարձնող ծածկույթով, կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթ: Քաշը 1մ² 170 գ: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծալվող օձիքից: Կիսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և տաք ներդիրով է: Կիսավերարկուին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մմ տրամագծով պլաստմասե կոճակներ: Կիսավերարկուի գոտու կողային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Կոճկվում է կափույրով ծածկվող սև գույնի շղթայով և կպչունակով: Թիկունքը՝ վերին կտրվածքով, կարմիր եզրաքուղով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կարմիր եզրագծով կափույրի տակ ներկարվում են շղթայով փակվող գրպաններ: Թեզանիքը առաձգական ժապավենով, ձախ կողմում ծոցագրպան: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» կամ (ՆԳՆ) մակագրությամբ կտոր, թիկունքին «POLICE» մակագրությամբ կտոր: Աստառը՝ մուգ փիրուզագույն, քաշը առնվազն 70գր մ²: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող ջակարդով ասեղնագործված թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Ուսադիրները՝ սև կտորից, կիսավերարկուի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

4. Կոստյում (տարազաբաճկոն և տաբատ՝ կիսաբրդյա, ամենօրյա)

Տարազաբաճկոնը Մուգ փիրուզագույն կտորից առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ² 314 գ, աստառը մուգ փիրուզագույն <<POLICE>> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գ՝ 1մ²: Բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձվող կտորով, իսկ կրծքամասում սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/ նույնպես կրկնակարվում են սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Կիտելի լանջափեշերը կոճկվում են 4 հատ միաշարք՝ ՀՀ ոստիկանության զինանշանով 22 մմ արծաթագույն, անփայլ մակերեսով

ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Օձիքը հետծալված, որի եզրերը կանտապատվում են կարմիր գույնի կտորով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի վրա կարվում է երկու դափնեճյուղերով մետաղական խորհրդանշաններ, դափնեճյուղերի կենտրոնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, որը պետք է լինի ասեղնագործված և կարմիր եզրակարով մշակված: Տարազաբաճկոնի 2 փեշերի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ: Կրծքամասի 2 կողմում տեղադրված են վրադիր գրպաններ, որոնց կափույրները կոճկվում են ՀՀ ոստիկանության զինանշանով 14 մմ արծաթագույն, անփայլ մակերեսով ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Ձախ գրպանի մեջտեղում կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ:

Հետևամասում բացվածք, ձախ կողմում ունի ծոցագրպան: Թևքերը 2 կտորից, որոնք թեզանիքի մասում միացվում են կարմիր եզրաքուղով: Աջ թևքի թեզանիքի վերևի մասում կարվում է Հայաստանի Հանրապետության եռագույնի տեսքով ժապավեն, որի եզրերը եզրակարված են կարմիր գույնի թելերով:

Տաբատը՝ Մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/ առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գ.: Աստառը մուգ փիրուզագույն <<POLICE>> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գր մ²: Ուղիղ ուրվագծով, կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի մահուդից երիզներ: Գոտին՝ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ:

5. Կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա)

Բաճկոնը մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/, առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1մ2 314գ, աստառը՝ մուգ փիրուզագույն << POLICE >> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գ մ²: Բաղկացած է կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է առաջամասի կենտրոնում տեղադրված պլաստմասե շղթայով, մեկ առանձին կտորից գոտեմասով, գոտու կողքային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի թևքերը բաղկացած են 2 կտորից, թեզանիքը թևքին միացված է կարմիր եզրաքուղով, թեզանիքը կոճկվում է 2 մետաղյա արծաթագույն ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, 14 մմ ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված շղթայով փակվող գրպաններ: Կրծքամասում հորիզոնական՝

շղթայով փակվող ներկարված գրպաններ, կարմիր եզրաքուղերով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից, որոնք միացված են կարմիր եզրաքուղով: Բաճկոնի օձիքը հետ ծալվող, մշակվում է 1 կտորից: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան՝ բաղկացած է 2 մասից, գունավոր գործվածքե կտորից, կողային մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Ուսադիրները կարվում են սև կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

Տաբատը–Մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/ առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գր.: Աստառը մուգ փիրուզագույն << POLICE >> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գր մ²: Ուղիղ ուրվագծով, կողագծերը 1.5-2 մմ լայնությամբ կարմիր գույնի կտորից եզրաքուղով: Գոտին՝ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ:

6. **Տաբատ (տաբատ կիսաբրդյա)**

Տաբատը բաղկացած է մուգ փիրուզագույն կտորից, առնվազն 67% բրդյա, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ² 258 գ: Աստառը՝ մուգ փիրուզագույն, քաշը առնվազն 70գ մ²: Ուղիղ ուրվագծով, կողագծերը կարմիր եզրաքուղով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է կոճակով, մետաղական կեռիկով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող ներկարված գրպան:

7. **Սվիտեր**

Սվիտերը բաղկացած է ամբողջովին սև գործվածքից, 70% ակրիլ, 30% բուրդ, քաշը առնվազն 1մ² 240գր: Վիզը կլոր, 2-2,5 սմ լայնության կրկնակի մանժետով: Սվիտերի դետալների հյուսվածքը ամբողջական է՝ «ջերսի» տեսակի: Թևքերի թեզանիքը և գոտկատեղի գործվածքը 1/1 տեսակի էլաստիկ ժապավենային, 5-6 սմ երկարությամբ: Կրծքամասում և մեջքամասում սվիտերի ամբողջ լայնքով գործված է 0.3 սմ լայնքով մոխրագույն գիծ, որից վերև, առջևի աջ մասում ամրացվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» կամ (ՆԳՆ) բառը: Ուսագլուխների և արմունկների հատվածում վրակարվում է սև կտորից վրադիրներ: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան: Ուսադիրները կարվում են նույն սև կտորից սվիտերի

չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ թևքի միացման կարի մեջ, որոնց ազատ ծայրերը կոճկվում են մետաղական կոճգամով:

8. Վերնաշապիկներ

1) Վերնաշապիկ երկարաթև՝ բաղկացած է փիրուզագույն կտորից, առնվազն 33% բնական վիսկոզա /շոլկ/ և 67% պոլիէսթեր, քաշը 1մ² 185 գ: Հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, որոնք միացվում են կարմիր գույնի եզրաքուղով: Առաջամասին մշակվում են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ: Գրպանները կոճկվում են 1 օղակ-կոճակով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առաջամասի յուրաքանչյուր կողմը բաղկացած է 2 լանջափեշերից: Ներքևի գոտու կողքային մասը ունի 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Թևքերը մշակվում են կարմիր գույնի եզրաքուղով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Թևքանշանի կողային մասերը եզրակարված են կարմիր գույնի թելերով: Ուսադիրները կարվում են սև կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

2) Վերնաշապիկ կարճաթև՝ բաղկացած է փիրուզագույն կտորից, առնվազն 33% բնական վիսկոզա /շոլկ/ և 67% պոլիէսթեր, քաշը 1մ² 170 գ: Հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, որոնք միացվում են կարմիր գույնի եզրաքուղով: Առաջամասերին մշակվում են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ: Գրպանները կոճկվում են 1 օղակ-կոճակով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առաջամասի յուրաքանչյուր կողմը բաղկացած է 2 լանջափեշերից: Ներքևի գոտու կողքային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Թևքերը մշակվում են կարմիր գույնի եզրաքուղով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Թևքանշանի կողային մասերը եզրակարված են կարմիր գույնի թելերով: Ուսադիրները կարվում են սև կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

3) Վերնաշապիկ երկարաթև սպիտակ՝ բաղկացած է սպիտակ գույնի կտորից, առնվազն 33% բնական վիսկոզա/շոլկ/ և 67% պոլիէսթեր, քաշը 1մ² 185 գ: Հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, որոնք միացվում են կարմիր գույնի եզրաքուղով: Առաջամասերին մշակվում են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ: Գրպանները կոճկվում են 1 օղակ-կոճակով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առաջամասի յուրաքանչյուր կողմը բաղկացած է 2 լանջափեշերից: Ներքևի գոտու կողքային մասերը ունեն 12-18 սմ երկարությամբ առաձգական

ժապավեն: Առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Թևքերի թեզանիքները մշակվում են կարմիր գույնի եզրաքուղով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Թևքանշանի կողային մասերը եզրակարված են կարմիր գույնի թելերով: Ուսադիրները կարվում են սև կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

4) Վերնաշապիկ կարճաթև սպիտակ՝ բացկացած է սպիտակ կտորից, առնվազն 33% բնական վիսկոզա /շոլկ/ և 67% պոլիէսթեր, քաշը 1մ² 170 գ: Հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, որոնք միացվում են կարմիր գույնի եզրաքուղով: Առաջամասերին մշակվում են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ: Գրպանները կոճկվում են 1 օղակ–կոճակով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առաջամասի յուրաքանչյուր կողմը բաղկացած է 2 լանջափեշերից: Ներքևի գոտու կողքային մասերը ունեն 12-18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Առաջամասերին մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Թևքերը մշակվում են կարմիր գույնի եզրաքուղով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Թևքանշանի կողային մասերը եզրակարված են կարմիր գույնի թելերով: Ուսադիրները սև կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ:

9. Փողկապ

Փողկապը բաղկացած է սև կտորից: Ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Երկարությունը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Հետևի մասում կոճկվում է էլաստիկ ժապավենով՝ մետաղյա ամրակով:

10. Ամենօրյա կոշկեղեն (կոշիկ սև)

Ամենօրյա կոշկեղենը կարված է սև բնական կաշվից /1,2-1,4 մմ հաստությամբ/: Բաղկացած է երեսամասից, միջնամասից, միջադիրից և ներբանից: Կրնկամասը կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողքերից ձգվող ժապավեն: Միջնամասը բամբակյա կտորից: Ներդիրը և հետնամասի աստառը համապատասխան բնական կաշվից /մեշին/, միջնադիրը բնական կաշվից /պադոշ/ կամ համարժեք: Կոշկաքիթը ուժեղացված, կրնկամասը կոշտ: Ներբանը պետք է պատրաստված լինի մաշակայուն նյութից, երեսամասի հետ կցման եղանակը սոսինձե ամրացում: Միջնադիրի և ներբանի միջև նախատեսվում է սուպինատոր /երկաթյա/: Ներբանի չափսերը միջին և լայն, բոլոր չափսերից հավասար քանակությամբ: Կոշիկի միջնադիրի վրա պետք է ունենա դրոշմ, որի վրա պետք է նշված լինի չափսը:

11. Ուսադիր կարովի

Կարովի ուսադիրն ունի մուգ փիրուզագույն խաչաձև գործվածքով մակերես, իսկ ուսադիրների վերնամասը՝ կլորացված, ներքնամասը ուղղանկյուն, կարմիր եզրաքուղով է: Ոստիկանության գնդապետ, փոխգնդապետ և մայոր կոչումներ ունեցող ծառայողներինը՝ 2 մակաշերտով են, իսկ կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ և կրտսեր լեյտենանտ կոչումներ ունեցող ծառայողներինը՝ 1 մակաշերտով ուսադիրներ են: Կրտսեր կոչում ունեցող ծառայողներին առանց մակաշերտի է:

12. Ուսադիր վրադիր (շարքային, սպայական, ավագ սպա) 40%-35%-25%

Վրադիր ուսադիրը բաղկացած է սև գունի թավշյա կտորից, օղակաձև 80 մմ երկարությամբ, 55 մմ լայնությամբ: Մակերեսը սև գործվածքով, վերնամասը և ներքնամասը կարմիր եզրագծերով: Ոստիկանության գնդապետ, փոխգնդապետ և մայոր կոչումներ ունեցող ծառայողներինը՝ 2 մակաշերտով, իսկ կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ և կրտսեր լեյտենանտ կոչումներ ունեցող ծառայողներինը՝ 1 մակաշերտով ուսադիրներ: Կրտսեր կոչում ունեցող ծառայողներին առանց մակաշերտի:

13. Աստղ 20 մմ

Աստղն արծաթագույն է, պատրաստված ալյումինի համաձուլվածքից, տրամագիծը 20 մմ, բաղկացած է հարթանիստ բուրգաձև հինգ թևերից: Աստղը փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

14. Աստղ 13 մմ

Աստղն արծաթագույն է, պատրաստված ալյումինի համաձուլվածքից, տրամագիծը 13 մմ, բաղկացած է հարթանիստ բուրգաձև հինգ թևերից: Աստղը փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրի 0.5 մմ հաստության ճկուն թիթեղից 15 մմ երկարության բեղիկներ:

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ արձագանքման վարչության հանդերձանք (ՔՈԳՎ ՕԱՎ)

15. Սպորտային կեպի

Կեպին սպորտային մուլտիկամ գույնի է, քաշը մոտ 200-210 գրամ, կտորի տեսակը՝ 65% պոլիեստեր է, 35% բամբակ: Բարձրություն (չափսի ձևափոխություն) մի չափ: Նախատեսված է ծառայողական օգտագործման համար, այս գլխարկը համատեղում է դասական գլխարկի նրբագեղ տեսքը և ֆունկցիոնալությունը՝ աշխատանքում և դաշտային պայմաններում: Ունի վեց հատվածից կազմվածք կլորացված գագաթով խիտ կտոր՝ ամրություն և թեթևություն ապահովելու համար, ինչպես

նաև ջրակայունություն: Ապահովում է լավ պաշտպանություն արևից և այլ եղանակային պայմաններից: Գլխարկը ունի շոգից պաշտպանիչ ներկապնակ ներսում, ինչպես նաև տարբերանշան ամրացնելու համար կպչունակներ և առաջնամասում, և հետնամասում: Ունի անցքեր գլխի գագաթում՝ օդափոխության համար:

16. Տակտիկական դիմակ

Տակտիկական դիմակի քաշը՝ 0.10 կգ, գործվածքը 92% բամբակ է և 8% էլաստան, շնչող, ձգվող է: Ապահովում է չոր հարմարավետություն:

17. Ձմեռային վերարկու

Ձմեռային վերարկուն մուլտիկամ գույն է, ունի մեկուսիչ նյութ, որը ապահովում է ջերմությունը ցանկացած պայմաններում: Նախատեսված է խիստ ցուրտ եղանակային պայմաններում կրման համար:

Նյութը արագ չորացող է, թեթև, 100% նեյլոն է: Արտաքին նեյլոնե շերտը պաշտպանում է քամուց և ջրից, միաժամանակ օդափոխություն ապահովելով: Բարձր օձիքի վրա՝ լայն, կարգավորվող գլխարկ, որի կապիչները հասանելի են կրծքի գրպաններից: Թևքերին առկա են կպչունակներ ուսակարից 60 մմ ներքև՝ տարբերանշան փակցնելու համար: Գլխարկը կարգավորվում է երկկողմանի կայծակաճարմանդով, ինչը կարևոր է՝ ձեռնոցները չհանելով գլխարկը կարգավորելու համար:

Գլխարկի ներսի փափուկ ֆլիսային շերտը բարձրացնում է հարմարավետությունը և պաշտպանում է մաշկը գրգռումներից:

Կրծքավանդակին՝ երկու ֆլիսապատ գրպաններ, որոնք պաշտպանում են ձեռքերը սառեցումից: Մեծ կողային գրպանների կայծակաճարմանդները թույլ են տալիս հեշտությամբ օգտվել դրանցից նույնիսկ հաստ ձեռնոցներ կրելու դեպքում: Գլխարկը և վերարկուի ստորին հատվածը կարգավորվող է: Վերարկուի ծավալը 22050 սմ^3, քաշը՝ 0.8 կգ է:

18. Տակտիկական կոշիկ (ամառային)

Տակտիկական կոշիկն ունի միջին բարձրություն: Տակացուն նպաստում է չսահելուն: Շրջանակը դիմացկուն, անջրաթափանց է և շնչող: Արտաքին կտորը

միկրոֆիբեր/սինթետիկա է: Մեկ կոշիկի քաշը 520 գրամ է 100% վեգան: Ներդիրը արագ ներծծող է և անատոմիական է, մոխրագույն է:

Այս տակտիկական կոշիկները հարմար են ցանկացած բարդության կոշտ տեղանքում կրելու համար: Հիանալի կերպով պաշտպանում են կոճը վնասվածքներից՝ շարժման ուղղության կտրուկ փոփոխությունների դեպքում (մինչև 70 աստիճան):

Դիմացկուն, բայց համեմատաբար փափուկ ներբանը հիանալի է աշխատում ցանկացած մակերևույթի վրա՝ թաց խոտից մինչև անձրևոտ հող, անտառային սայթաքուն ճանապարհից մինչև կոտրված և ճանապարհին հայտնված ծառեր, ինչպես նաև թեթև, մետաղազերծ կառուցվածք: Հարմարավետ ներքնաշերտը հակաբակտերիալ է և համատեղելի օրթոպեդիկ ներդիրների հետ: Կոշիկը ապահովում է ոտքի կայունություն և հարմարավետություն երկարատև կրելու ընթացքում:

19. Տակտիկական կոշիկ (գարուն, աշուն, ձմեռ)

Տակտիկական այս կոշիկները ստեղծված են բարձր նանոտեխնոլոգիական մանրաթելերի և նյութերի հիման վրա, որոնք երաշխավորում են և ապահովում են դիմացկունություն, հուսալիություն, ջրամեկուսացում օդափոխություն հակահարվածային համակարգ և այլն: Ներբանն ունի օպտիմալ ռետինե խառնուրդ և, հետևաբար, հատկապես սայթաքուն դիմացկուն է, կայուն և կոշտ:

20.Տակտիկական վերնաշապիկ (գարնանային, աշնանային)

Տակտիկական վերնաշապիկի իրանը պատրաստված է բարձր շնչող, թեթև գործվածքից, իսկ թևերն ու կանգուն օձիքը պատրաստված են ամուր խառնուրդից: Ունի կայծակաճարմանդ գրպաններ թևերի վրա, որոնք կպահեն շատ փոքր անհրաժեշտ իրեր, ինչպիսիք են թիրախային լուսանկարը, ծալված քարտեզը կամ GPS-ը: Երկգլուխ մկանների վրա գտնվող կրկնակի օղակների վահանակները թույլ են տալիս հեշտ անհատականացնել միավորը կարկատաններով և երկրի դրոշներով:

Նախատեսված է պրոֆեսիոնալ հրաձիգների կողմից հրաձգարանում աշխատելու համար: Արագ չորացող է:

Կողքերը պաշտպանում են մաշվածության և պատռվելու համար խոցելի տարածքը ատրճանակի գոտիներից և գոտիների վրա տեղադրված սարքավորումներից: Անկյունի հատված ներդիրների համար: Թևատակերի ցանցը բարձրացնում է ֆունկցիոնալությունը: Վերին թևերի երկու օղակաձև վահանակները թույլ են տալիս հեշտ անհատականացում: Բացի այդ, կան երկու վերին թևերի գրպաններ:

21.Տակտիկական վերնաշապիկ (ամառային)

Տակտիկական վերնաշապիկը պատրաստված է ջերմաակտիվ պոլիեսթերից, գույնը շագանակագույն (Coyote) որը պահպանում է վերնաշապիկը չոր և սառը: Այն ավելի ֆունկցիոնալ դարձնելու համար կոճակի սալիկը ունի ամրացման օղակ, իսկ ձախ թևն ունի կոճկված փոքրիկ գրպան: Վերնաշապիկը կարող է օգտագործվել բոլոր տեղանքային պայմաններում: Գործվածքը արագ չորացող է:

22.Գոտի

50 մմ լայնությամբ արտաքին տակտիկական, կանաչ գույնի գոտի է, սինթետիկ գործվածքից: Հիանալի է աշխատում՝ պահելով տարբեր ենթապայուսակներ և ատրճանակի պատյաններ: Գոտին կարող է արագ արձակվել, բայց ոչ պատահականորեն՝ շնորհիվ հատուկ երեք կետանոց ճկման համակարգի:
Գոտու ներքին կողմն ունի կպչունակ, որը լրացուցիչ կայունացնում է ենթապայուսակները և թույլ չի տալիս դրանք շարժվել գոտու երկայնքով: Ունի պարզ ներքին գոտի՝ հիմնական աշխատանքային գոտիների համակարգը կայունացնելու համար:

23.Տակտիկական տաբատ

Տակտիկական տաբատն ունի՝ ուրվագծային կտրվածք մեջքի և միջանցքի հատվածում, ստանդարտ ազդրի գրպաններ՝ ամրացված եզրերով, հետևի գրպաններ՝ ամրացված եզրերով: Կանադական ոճի կոճակներով մեծ բեռների գրպաններ ոտքերի կողային հատվածում: Պրոֆիլավորված, ամրացված ծնկներ: Գոտին փակվում է կպչունակով: Ծնկակալները կարգավորելի են ռետինե լարով:

24.Տակտիկական ձեռնոցներ

Տակտիկական ձեռնոցները նախատեսված են իրավապահ մարմինների աշխատակիցների համար և ապահովում են բարձր պաշտպանություն: Շնորհիվ բարակ սինթետիկ կաշվի առկայության այն թույլ է տալիս կառավարել սենսորային էկրանը դրանք կրելիս: Ապահովելու ամրություն և կոշտություն՝ միաժամանակ ապահովելով ճկունություն հիմնական հատվածներում: Ձեռքի հետևի մասում գտնվող սպանդեքսը գերազանց ապահովում է առաձգականություն:

Այս ձեռնոցները ճկուն են և փափուկ թեթև բեռների տակ, բայց դառնում է կոշտ և առաձգական ծանր բեռների տակ: Բեռը արդյունավետորեն բաշխվում է նյութի վրա, որը ակնթարթորեն կարծրանում է: Առաձգականությունն անմիջապես վերադառնում է, երբ բեռը հանվում է: Նյութը՝ ջերմապլաստիկ ռետին, որը պահպանում է իր ճկունությունը ինչպես տաք, այնպես էլ ցուրտ պայմաններում իր ողջ ծառայության ժամկետի ընթացքում:

25. Տակտիկական ֆլիսե բաճկոն

Տակտիկական ֆլիսե բաճկոն արտաքին մեկուսացման շերտ է, որը նախատեսված է ծայրահեղ ցուրտ եղանակին օգտագործելու համար:

Օձիքը պարունակում է ընդարձակ գլխարկ, որը կարգավորվում է կրծքավանդակի գրպաններից հասանելի ձգող պարաններով: Գլխարկի գրպանը կայծակաճարմանդով փակվում է երկկողմանի կայծակաճարմանդով: Սա կարևոր է գլխարկին մուտք գործելու համար՝ առանց ծանր ձեռնոցները հանելու անհրաժեշտության: Գլխարկի փափուկ, բրդյա ծածկույթը մեծացնում է կրելու հարմարավետությունը և կանխում քերծվածքները: Երկու բրդյա ծածկով կրծքավանդակի գրպանները պաշտպանում են ձեռքերը ցրտահարությունից: Կողային մեծ գրպանների կայծակաճարմանդները թույլ են տալիս մուտք գործել նույնիսկ ծանր ձեռնոցներ կրելիս: Ծածկույթը հիդրոֆոբ է՝ արագ չորանում է, եթե թաց է: Արտաքին նեյլոնե պատյանը պաշտպանում է քամուց և ջրից, միաժամանակ թույլ տալով շնչել:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության և ծառայողների հանդերձանքի կրման ժամկետները

N	Անվանումը	Քանակը	Կրելու ժամկետները
1.	Գլխարկ՝ կիսաբրդյա, ամենօրյա	1 հատ	2 տարի
2.	Գլխարկ ձմեռային, ականջակալներով	1 հատ	3 տարի

3.	Կոստյումներ (տարազաբաճկոն և տաբատ՝ կիսաբրդյա, ամենօրյա)	1 հատ	3 տարի
4.	Կիսավերարկու	1 հատ	2 տարի
5.	Կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա)	1 հատ	2 տարի
6.	Տաբատ (տաբատ կիսաբրդյա)	1 հատ	2 տարի
7.	Սվիտեր	1 հատ	3 տարի
8.	Վերնաշապիկ երկարաթև	2 հատ	2 տարի
9.	Վերնաշապիկ կարճաթև	2 հատ	2 տարի
10.	Վերնաշապիկ երկարաթև սպիտակ	1 հատ	2 տարի
11.	Վերնաշապիկ կարճաթև սպիտակ	1 հատ	2 տարի
12.	Փողկապ	1 հատ	1 տարի
13.	Ամենօրյա կոշկեղեն (կոշիկ սև)	1 զույգ	1 տարի
14.	Սպորտային կեպի (ՔՈԳՎ ՕԱԳՎ)	1 հատ	2 տարի
15.	Տակտիկական դիմակ	1 հատ	2 տարի
16.	Ձմեռային վերարկու	1 հատ	4 տարի
17.	Տակտիկական կոշիկ (ամառային)	1 զույգ	2 տարի
18.	Տակտիկական կոշիկ (գարուն, աշուն, ձմեռ)	1 զույգ	4 տարի
19.	Տակտիկական վերնաշապիկ (գարնանային, աշնանային)	1 հատ	3 տարի
20.	Տակտիկական վերնաշապիկ (ամառային)	1 հատ	3 տարի
21.	Գոտի	1 հատ	5 տարի
22.	Տակտիկական տաբատ	1 հատ	4 տարի
23.	Տակտիկական ձեռնոցներ	1 հատ	3 տարի
24.	Տակտիկական ֆլիսե բաճկոն	1 հատ	4 տարի

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29»դեկտեմբերի 2025թ.
N 109-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Կեպի՝ ձմեռային, մուգ կապույտ

Կեպին ունի մուգ կապույտ գույն (գունային կոդը՝ ըստ PANTONE տեքստիլ կատալոգի 19-4013 TPX կամ NCS գունային կատալոգի S 8005-B):

